ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ _____ 2024 թվականի №___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №523-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» № 523-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ԷԲՑ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 136.1-րդ և 136.2-րդ կետերով.

«136.1. Սպառողի սպառման համակարգի էլեկտրամատակարարման պլանային և վթարային ընդհատումների գումարային քանակը մեկ ամսվա ընթացքում չպետք է գերազանցի՝

1) 10-ը՝ քաղաքային համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանում գտնվող սպառողների համար,
2) 15-ը՝ գյուղական համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանում գտնվող սպառողների համար,
3) 15-ը՝ մնացած բոլոր սպառողների համար:

136.2. Սպառողի սպառման համակարգի էլեկտրամատակարարումը պահուստավորող երկու անկախ սնման աղբյուրից իրականացված լինելու դեպքում պահուստային սնուցման միացման ավտոմատ վերականգնման ժամանակահատվածը ընդհատում չի համարվում:»:

2) ԷԲՑ կանոնների 242-րդ կետում «Էլեկտրական էներգիայի ավտոմատացված հաշվառման համակարգում» բառերը փոխարինել «Բաշխողի Էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում (ԲԷԱՀ)» բառերով:

3) ԷԲՑ կանոնների 247-րդ կետի 1-ին ենթակետում «ռեակտիվ» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ 0,22 կՎ լարման Սպառողների)» բառերը:

4) ԷԲՑ կանոնների 274-րդ կետի 1-ին ենթակետում «քան 2500 դրամը» բառերից հետո լրացնել «իսկ Սպառողի սպառման համակարգի էլեկտրամատակարարման վթարային ընդհատումների ԷԲՑ կանոնների 135-րդ կետով սահմանված տևողություններից յուրաքանչյուրի կրկնակին գերազանցելու դեպքում՝ սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 3500 դրամը:

5) ԷԲՑ կանոնների 275-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«275. Սպառողի դեպքում (բացառությամբ 135-րդ կետով սահմանված ժամկետների խախտման դեպքերի) հաշվարկված տույժը Բաշխողը հաշվի է առնում Սպառողի ընթացիկ ամսում ծախսած էլեկտրական էներգիայի համար ներկայացվելիք հաշվարկային փաստաթղթում: ԷԲՑ կանոնների 135-րդ կետով սահմանված

ժամկետների խախտման դեպքերում՝ Բաշխողը հաշվարկված տույժը հաշվի է առնում Սպառողի ընթացիկ հաշվարկային ամսվան հաջորդող ամսում ծախսած էլեկտրական էներգիայի համար ներկայացվելիք հաշվարկային փաստաթղթում: Հաշվարկված տույժը հաշվարկային փաստաթղթում նշվում է առանձին տողով և նվազեցվում է մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքից, իսկ Մատակարարի Սպառողի դեպքում՝ բաշխման ծառայության արժեքից:» :

6) ԷԲՑ կանոնների 282-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«282. Էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների ցուցանիշները (Համակարգի անջատման միջին տևողության ինդեքսը՝ SAIDI, Համակարգի ընդհատումների միջին հաճախականության ինդեքսը՝ SAIFI), սկսած 2025 թվականից, տարեկան արդյունքներով չպետք է գերազանցեն 2020 թվականի ցուցանիշների 75%-ը, իսկ սկսած 2028 թվականից՝ 2020 թվականի ցուցանիշների 55%-ը:»:

7) ԷԲՑ կանոնների 283-րդ կետում «2021» թիվը փոխարինել «2020» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ 1-ին կետի 1-ին, 4-րդ և 5-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան

___ _____ 2024թ.